ԱՐՀԵՍՏԱՒՈՐՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ։

ԿԻՒՐԱԿՆՕՐԵԱՅ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐԸ

Սահմանուած է

Թիֆլիսի Արհեստական ուսումնարանում։

ԹԻՖԼԻՍ
Տպարան Վրաց. Հրատարակ. Ընկերութեան։
1897

ԱՐՀԵՍՏԱՒՈՐՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ։

Ուսումնական Վարչութեան թոյլատրութեամբ փետրուարի 2-ին Արհեստաւորաց ուսումնարանին կից բացւում է կիւրակնօրեայ արհեստագիտական դասընթացքներ։ Դասընթացքները սահմանւում են առաւելապէս արհեստաւորների, արհեստաւորների աշակերտների, երկաթուղու և գործարանների բանւորների և ուրիշ դոցա նման անձանց համար։

Վաղուց արդէն նկատուած է, որ քանի աւելի են զարգացած և կրթուած արհեստաւորները և նրանց օգնականները, այնքան նրանց գործը աւելի լաւ է, ամուր է, գեղեցիկ է, շինւում է մինչև անգամ աւելի շուտ և արժան։ Շատ գործարաններում նկատելի են, որ գրագէտ բանուորները վաստակում են շատ

աւելի, քան թէ անգրագէտները։ Այն երկիրները որտեղ որ ուսումնարաններ աւելի շատ են, որտեղ ժողովուրդը աւելի է սովորում և որտեղ գրքեր աւելի են կարդում իրանց ձեռքի գործերով աւելի բարձր են կանգնած սակաւ կրթուած երկիրներից. այս ճշմարտութիւնը դարձել է այնպէս ակնեռ և անվիճելի, որ բոլոր երկիրները, կառաւարութիւնները և հասարակութիւնները հոգս են տանում կրթութեան տարածելու մասին, որովհետև դորա մէջ են միակ միջոցը տեսնում իրանց ժողովուրդը աւելի հարուստ և բաղդաւոր դարձնելու.

Մինչև անգամ ուսումնարանում կարճատև մնալը, մինչև անգամ միայն կարդալ և գրել գիտենալը մարդու խելքի վրայ այնպէս հզօր կերպով ներգործում է, դարձնում է բանուորին այնչափ աչքաբաց, որ նա հէնց միայն այս պատճառով կարողանում է գործել աւելի շատ և աւելի լաւ, ուրեմն և վաստակում է աւելի շատ։ Մէկէնումէկ դժուար է մինչև անգամ հաւատալ այս բանին, բայց շատ հետախոյզների բազմաթիւ դիտողու-

թիւնները բոլորն էլ հաստատում են, որ գրագէտ ուսած բանուորները գործարաններում վաստակում են աւելի, քան թէ անգրագէտները։

Բացի կարդալ և գրել գիտենալուց կան շատ գիտութիւններ, որոնք առանձնապէս հարկաւոր են ամեն մի արհեստաւոր և բանուոր մարդու համար. ամենից առաջ և ամենից աւելի հարկաւոր է գիտենալ հասկանալ նկարը և գծագիրը, և գիտենալ նկարել և գծագրել։ Այդ գիտութիւնը ոչ միայն անհրաժեշտ է համարեայ թէ ամեն մի աշխատանքի ժամանակ, այլ նա զարգացնում է աչքը և գեղեցկութեան ընբռնումը. արհեստաւորների գործերը շատ անգամ զուրկ են գեղեցկութիւնից, գեղեցիկ գծագրութիւնից, առանձին մասերի համաչափութիւնից, ներկերի կանոնաւոր ընտրութիւններից, այն ինչ գործերի սիրուն տեսքը ամենից աւելի նպաստում է նրա ծախելուն և այդ ժողովուրդից գնահատւում է։ Արհեստաւորը՝ որի ճաշակը զարգացած է ինքը չի շինի տգեղ բաներ, նորա սեպհական զգացմունքը կվրդովուի իրան գոր-

ծի տգեղ տեսքով, և նա մինչև անգամ շտապէ էլ, ակամայ կտայ իւր գործին այնպիսի տեսք, որ նա ինքը առանց ամաչելու կարող է նայել նրա վրայ։ Գեղեցկութեան գաղափարը ամենից աւելի զարգանում է նկարչութիւնով, գեղեցիկ առարկաներ օրինակելով, նոյն իսկ այդ առարկաների նկարները զննելով։

Արհեստաւորների ծանօթութիւնը նկարների, գծագրական ժողովածուների հետ կօգնէ նրանց իրանց գործերի մէջ աւելի զանազանակերպութիւն և նրբութիւն մտցնելու, կըօգնէ նրանց զանազան դէպքերում մի որևէ փոփոխութիւն և կատարելագործութիւն հըներել։ Հարկաւոր է միայն որ արհեստաւորները գոնեայ փոքր ինչ ծանօթանան իրանց մասնագիտութեան վերաբերեալ գրքերի, գծագիրների և նկարների հետ։ Այս ծանօթութիւնը այնպէս նրանց կհարկաւորուի, այնպէս կթեթևանայ նրանց դժուար գործը, որ նրանք յետոյ իրանք կորոնեն գիրք կամ նկար։ Շատ փորձուած և իրանց գործը լաւ գիտացող մարդիք աշխատել են և կազմել են ձեռնարկներ, ժողովածուներ, նկարներ, գծագիր-

ներ, որոնք կարող են լինել շատ հարկաւոր արհեստաւորներին. հարկաւոր է միայն սովորել հասկանալ նկարները և գծագիրները։ Գծագրութիւնը նոյնպէս կարևոր է, ինչպէս և նկարչութիւնը, բայց միայն կատարւում է գծագրական գործիքների, և ոչ միայն մատիտի և ռետինի օգնութեամբ։

Այն արհեստաւորների համար, որոնք գործ ունին մեքենաների հետ, մեքենագործների և ուրիշ արհեստաւորների համար գծագրութիւնը ունի ոչ պակաս նշանակութիւն, քան թէ նկարչութիւնը։ Շատ գործարաններում իրանք գործարանատէրերը իրանց հաշւով հիմնում են գծագրութեան դասընթացքներ. ամենքը գիտեն որ մեքենաներ և նրանց զանազան մասերը շինում են միայն գծագիրներով և երբէք չեն շինում յիշողութիւնով կամ աչքով։

Գծագրների լաւ հասկանալու և մանաւանդ գծագրութեան համար անհրաժեշտ է ուսանել գոնեայ ամենահամառօտ կերպով երկրաչափութեան կանոնները։ Այդ կանոնները կհարկաւորուին թէ գործը շինելու, թէ նրա

մասերը չափելու և թէ ամբողջ կազմուածքը սարքելու ժամանակ։ Գծագրելիս գծագիրները այն ժամանակ միայն կարող են կանոնաւոր լինել, երբ որ նրանց կազմողը ունի գոնեայ փոքր ինչ տեղեկութիւններ երկրաչափութիւնից. այս տեղեկութիւնները կօգնեն նրան հաշուել գործի համար հարկաւոր նիւթի քանակութիւնը, յաճախ և արժէքը և այլն։

Բացի գծագրութիւնից և նկարչութիւնից ամեն մի արհեստաւորի և բանուորի համար կարևոր է ուսանել թուաբանութիւն, ոմանց. հարկաւոր է փոքր տեղեկութիւն՝ այն է գիտենալ համարել ամբողջ թուեր, հաշուել համրիչի վրայ, իսկ միւսներին հարկաւոր է գիտենալ հասարակ և տասնորդական կոտորակներ։ Ով որ ուզում է արհեստների վերաբերեալ գրքեր կարդալ, պէտք է գիտենայ կոտորակներ, որովհետև առանց նրանց ոչ մի կանոնաւոր հաշիւ չէ կարելի անել, առանց թուաբանութեան չէ կարելի վարել ոչ մի հաշուամատեան, դժուար է հաշուել բանուորի վարձը, նիւթի արժէքը և այլն։ Ով որ ուզում է ծանօթանալ մեքենագործութեան

հետ, անպատճառ նախ և առաջ պէտք է պարապել թուաբանութիւնով։

Նկարչութիւնը, գծագրութիւնը, երկրաչափութիւնը և թուաբանութիւնը այնպիսի անհրաժեշտ առարկաներ են արհեստաւորների համար, որ պէտք է ցանկանալ, որ բոլոր երիտասարդ արհեստաւորները անպատճառ նրանց վրայ ուշադրութիւն դարձնեն. բայց այդ ամենապարզ և ամենամատչելի առարկաներ են. իսկ արհեստաւորը և բանուոր մարդը եթէ միայն կամենում է լինել լաւ արհեստաւոր, իւր գործը հասկացող, այնպէս որ ինքն էլ կարողանայ մի որևէ բան հնարել, պէտք է գիտենայ շատ աւելի։

Ով որ գործ ունի մեքենաների հետ նրա համար օգտաւէտ է մեքենագործութիւն սովորել, եթէ նա մեքենաներ չէ ուղղում, չէ նորոգում նրանց, այն ժամանակ միայն բաւականէ նրան որ հասկանայ ինչպէս են շարժւում մեքենայի զանազան մասերը, իսկ եթէ նա մեքենաներ է կազմում կամ նորոգում նրան օգտաւէտ է որ գիտենայ թէ ինչ չափերի կամ ինչ ձևերի պէտք է լինին զանա-

զիքայից։ Ֆիզիքայի ուսումը ընդարձակ է, կան այնպիսի բազմաթիւ գրքեր այս առարկայից, որ նիւթը շատ տարիներ կբաւականանայ, միայն թէ ցանկութիւն լինի։ Եւ այսպէս ուսմունքը բացի շատ հետաքրքրական լինելուց, օգտաւէտ է և գործնական տեսակետով, որովհետև ֆիզիքական գիտութիւնների գործադրութիւնը շատ զանազան և ընդարձակ է։

Այս բոլոր վերնասուածի համեմատ բացուող դասընթացքներում աւանդուելու են. նրկարչութիւն, գծագրութիւն, ֆիզիքայ, քիմիա և բացի այդ մի քանի արհեստների համար օգտաւէտ հետևեալ առարկաները։

Հնոցապանների համար շոգեկաթսաների հետ վարուիլը։

Ճախարակագործների համար զանազան պտուտակների և ոլորների կտրելը չարխի վրայ։

Առաջին դասընթացքը օգտաւէտ կլինի և այն հնոցապանների համար, որ արդէն բանել են, որովհետև աւելի լաւ կբացատրէ նրանց այն կանոնները, որոնք անհրաժեշտ

կերպով պիտի պահպանուին կաթսայի անվտանգ և երկար ծառայելու համար։ Կաթսայի պատառումը սարսափելի անբաղդութիւն կարող է պատճառել, շատ մարդիք կործանել, շինութիւններ քանդել. այս պատճառով անհրաժեշտ է որ հնոցապանը կաթսայի բոլոր մասերի կազմութիւնը և գործածութիւնը պարզ հասկնայ և նոյնպէս գիտենայ թէ ինչպէս պէտք է վարուի կաթսայի փչանալու կամ անբաղդութեան ժամանակ։ Կաթսայի խելացի պահելը պահպանում է կաթսան և խնայում է վառելիքի ծախսը։

Ճախարակագործների դասընթացքը կարող է օգտաւէտ լինել երիտասարդ ճախարակագործների համար, բայց պահանջում է գոնեայ փոքր ծանօթութիւն թուաբանութեան հետ։ Բացի սրանից յետոյ կբացուին դասընթացքներ. 1) շոգէմեքենաներ վարելու, 2) փականագործութեան և 3) արհեստաւորաց հաշուապահութեան։

Ցանկացողների համար Ուսումնական Վարչութեան թոյլատրութեամբ կկազմուին մէկ կամ երկու կիւրակէ տևող զրոյցներ կամ կար-

ճառօտ դասընթացքներ զանազան արհեստագիտական հարցերի վերաբերմամբ, եթէ միայն բաւականաչափ սունկնդիրներ կգտնուին և հնարաւոր կլինի դասընթացքների սկզբում սահմանափակ միջոցներով կազմակերպել այդպիսի ընթերցանութիւն։

Առարկաների ընտրութիւնը կախուած է միայն ունկնդիրներից. յայտնի բան է չէ կարելի մէկ անգամից գրուիլ բոլոր դասընթացքներին, որովհետև պարապմունքները լինելու են միայն 4 ժամ իւրաքանչիւր կիւրակէ, կարելի է՝ զորօրինակ ընտրել այսպիսի առարկաներ. նկարչութիւն 2 ժամ, թուաբանութիւն 1 ժամ և երկրաչափութիւն 1 ժամ կամ այսպէս. գծագրութիւն 2 ժամ, թուաբանութիւն 1 ժամ, մեքենայագործութիւն 1 ժամ, կամ ուրիշ առարկաներ, և ով ինչ կըկամենայ։

Թէև կանոնադրութիւնով վճար է սահմանուած, բայց սկզբում վճարը պարտադիր չի լինել, այլ կամաւոր, որովհետև պէտք է յուսալ, որ կգտնուին բարի մարդիք, որոնք գործի օգտի համար կտան միջոց դասընթացք-

ները տանելու և վարելու։ Իրանք արհեստաւորները, եթէ կտեսնեն որ դասընթացքները օգուտ են բերում իրանց, անկասկած առաջինը նրանք օգնութեան կհասնեն։ Եթէ այսպիսի օգնութիւն հասնէր, դասընթացքները կկարողանան կազմել արհեստաւորների համար գրադարան զանազան արհեստագիտական գրքերից, ժողովածուներից, գծագիրներից և նկարներից, ամսագրերից, նոյնպէս կկարողանան ունենալ կաղապարների, օրինակների, գործիքների պաշար և այլն։ Իսկ առայժմ դասընթացքները յոժարութեամբ յանձն կառնեն ցոյց տալ և նոյն իսկ բերել տալ իրանց ունկնդիրների համար գրքեր, նկարներ և գծագիրներ։

Արհեստագիտական դասընթացքները նոր գործ է Թիֆլիսում, բայց ուրիշ քաղաքներում և մանաւանդ արտասահմանում մեր դրացի գերմանացոց մօտ հիմնում են շատ ընդարձակ ծաւալով. Բերլինում՝ զորօրինակ, միայն թուաբանութիւնը և երկրաչափութիւնը ուսանում են այսպիսի դասընթացքներում 960 հոգի, նկարչութիւնը նոյնքան հոգի, իսկ գծագրութիւնը 1500 հոգուց աւելի։

Աւստրիայի Վիեննա քաղաքում մոտ 29000 արհեստաւորներ յաճախում են երեկոյեան և կիրակնօրեայ դասընթացքներ։ Արտասահմանում իրանք արհեստանոցի տէրերը ուղարկում են իրանց աշակերտներին և վարպետի օգնականներին դասընթացքները. որովհետև նրանք շատ լաւ հասկանում են, որ քանի աւելի խելոք, բանիմաց, զարգացած և կրթուած կլինին իրանց աշակերտները և վարպետների օգնականները, այնքան նախ և առաջ աւելի լաւ կլինեն նոյն իսկ տէրերի համար։

Պէտք է յուսալ որ Թիֆլիսում արհեստանոցների և գործարանների տէրերը ոչ միայն թոյլ կտան իրանց աշակերտներուն և վարպետների օգնականներուն յաճախել դասընթացքներին և նրանց վրայ իրանց ազդեցութիւնը գործ կդնեն և կօգնեն որ դասընթացքները ծառայեն մեր քաղաքի արհեստաւորների և բանւորների օգտին.

Պարապմունքները կը սկսուին փետրուարի 2-ին. կարելի է գրուել ամենայն օր Արհեստաւորաց դպրոցում (Էկզարխի հրապա-

բակ)։ Նոյն դպրոցում կարելի է ստանալ ներմանապէս և բոլոր մանրամասն տեղեկութիւններ, ծրագիրը, պարապմունքների ցուցակը, ուսուցիչների ցուցակը և այլն։

Дозволено цензурою. Тифлисъ, 31 января 1897 г.

Типографія Грузинскаго Издательскаго Товарищества.